Շառլ Ազնավուր

Աշխարհահռչակ երգիչ, երգահան, կինոդերասան, արժանացել է Հայաստանի և Ֆրանսիայի բարձրագույն պետական պարգևների, Հայաստանի մշտական դեսպանն է ՅՈՒՆԵՍԿՕ-ում



Ծնողները՝ Միքայել և Քնար Այվազյանները, 1915թ. գաղթել են Ֆրանսիա և բնակություն հաստատել Փարիզում, որտեղ էլ 1924թ. ծնվել է Շառլը (իսկական անունը՝ Շահնուր - Վաղինակ Ազնավուրյան): Ինը տարեկանում ընդունվել է «Փոքր ազգի թատրոն»: Խաղացել է բազմաթիվ մանկական ներկայացումներում:

1940թ., ծանոթանալով երիտասարդ դաշնակահար, կոմպոզիտոր Պիեռ Ռոշի հետ, սկսել է հանդես գալ կաբարեում: Դուետի ստեղծած առաջին երգը՝ «Ես հարբած եմ», Ժորժ Ուլմյերի կատարմամբ արժանացել է «Տարվա սկավառակ» մրցանակին: Ազնավուրի համար բեկումնային էր 1946թ. Էդիտ Պիաֆի հետ հանդիպումը:

Սկզբում Շառլը Պիաֆի վարորդն էր, իսկ ավելի ուշ՝ քարտուղարը: Նույնիսկ երկու անգամ ավտովթարի է ենթարկվել երգչուհու հետ: Պիաֆը, նկատելով արտիստի տաղանդը, նրան դարձրել է իր աշակերտը:

Հանդիսատեսը երկար ժամանակ մերժել է երգչին, սակայն 1956թ. Փարիզի «Օլիմպիա» դահլիճում կայացած հաջող ելույթով Ազնավուրը նվաճեց բեմը:

Հայ երգիչը մոտ 800 երգի հեղինակ է, որոնց կատարողներից են հռչակավոր երգչուհիներ Էդիտ Պիաֆը, Լայզա Մինելին, Պլաչիդո Դոմինգոն, Հուլիո Իգլեսիասը, Շերը, Ջո Դա-Սենը և ուրիշներ:

Ամերիկյան «Թայմզ» հանդեսը Շառլին ճանաչել է «դարի արվեստագետ»:

Նկարահանվել է մի շարք ֆիլմերում. «Գլուխը պատի», «Կրակեք դաշնակահարի վրա», «Սատանան և 10 պատվիրանները», «Արարատ» և այլն: